

“Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը” ազգային զեկույցի մշակումն իրականացվել է Համաշխարհային բանկի զարգացման վարկային ծրագրի շրջանակում Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի ֆինանսավորմամբ, ՀՀ վիճմախարարության սոցիալ-ժողովրդագրական վարչության կողմից կազմակերպված Հայաստանի տնային տնտեսությունների հետազոտության արդյունքներով (մասնագիտական ղեկավարումն իրականացրել է Ջ. Մազուչանցը, որին ակտիվորեն աջակցել է Գ.Մարտիրոսովան, վարչական ղեկավարումը՝ Ա. Միրզախանյանը):

Տնային տնտեսությունների հետազոտությանը և սույն զեկույցի մշակմանը մասնակցել են նաև Հայաստանյան արտագերատեսչական փորձագետներ: Ծրագրավորման աշխատանքները կատարվել են պրն. Գուրգեն Ազատյանի ղեկավարությամբ, որին աջակցել են Նարինե Հակոբյանն ու Նահրուհի Ջրբաշյանը: Հարցաթերթի և օրագրի ձևավորումն ու ռեգրեսիոն վերլուծությունները կատարել է Նահրուհի Ջրբաշյանը: Ձեկույցի գիտական խմբագիրն է՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հեղինե Մանասյանը: Խմբագրական և սրբագրական աշխատանքները կատարել է հայերեն լեզվի մասնագետ Կարինե Լուփոյանը:

\* \* \*

ՀՀ Վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարությունը խորին շնորհակալություն է հայտնում Համաշխարհային բանկի մասնագետներին, որոնց մասնագիտական, խորհրդատվական և տեխնիկական մեծ ներդրման շնորհիվ հնարավորություն ընձեռվեց իրականացնել տնային տնտեսությունների լայնածավալ ուսումնասիրությունը և նախապատրաստել սույն զեկույցը:

Հատկապես՝ պրն. Ալեքսանդր Մարկին (մարդկային ռեսուրսների մասնագետ), որը ղեկավարում էր Համաշխարհային բանկի կողմից տեխնիկական աջակցությունը, Ժիլյեն Դելենին (վիճակագրության մասնագետ), որի ակտիվ մասնակցությամբ կազմակերպվել էր տնային տնտեսությունների հետազոտությունը, տնտեսագիտության թեկնածու՝ պրն. Ռուսլան Յեմցովին, որի վերլուծական աղյուսակներն ու տնտեսագիտական մեկնաբանությունները չափազանց օգտակար եղան զեկույցը նախապատրաստողների համար, տկք. Ժանին Բերտվեյտին (տնտեսագետ) և Մարգարետ Գրոշին (էկոնոմետրիկ), որոնց խորհրդատվական մասնակցությունը կարևոր դեր ունեցավ հարցաթերթերի մշակման ու արդյունքների վերլուծության գործում: Համաշխարհային բանկի խորհրդականներ պրոֆեսոր Քրիստոֆեր Մքոթին (ընտրանքի կազմակերպում), պրոֆեսոր Ջեյմս Գիլանին (հարցաթերթի ձևավորում), պրոֆեսոր Կատրին Ջեյլերին (սննդամթերթի էներգետիկական հաշվարկ) և պրն. Ռոնի Դինուդին (վերլուծական աղյուսակների նախապատրաստում), որոնց փորձն ու գիտելիքները կիրառություն գտան տնային տնտեսությունների հետազոտության ողջ ընթացքում: